ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N <<ՀՀՔԿԴ-ԲԸՀԱՇՁԲ -17/2.1>>

ք. Երևան <<18>> << մայիսի>> 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Զալինյանի, ով գործում դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՋԱՏԵԳ>>ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Վ. Գրիգորյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարքսի 15ա հասցեում գտնվող շենքի ընթացիկ նորոգման** աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև **01.08.2017թ**:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա)Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ)Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ)Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ)Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մինչև 365 օրը: Եթե երաշխիքային

ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 3 օրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Աշխատանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 4.2-րդ կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **18707070 (Տասնութ միլիոն յոթ հարյուր յոթ հազար յոթանասուն)** ՀՀ դրամ, որից **3117845 (երեք միլիոն մեկ հարյուր տասնյոթ հազար ութ հարյուր քառասունհինգ)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.8 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները կազմված են 8 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ քննչական կոմիտե	<<ՋԱՏԵԳ>>ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 1շ. բն. 31
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	<<Ամերիաբանկ>>ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 900011000834	Հ/Հ 1570024488900100
ՀՎՀՀ 02631263	ՀՎՀՀ 00454467
	jateg-llc@rambler.ru
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
<< 18 >> մայիսի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀՔԿԴ-ԲԸՀԱՇՁԲ-17/2.1>> գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարքսի 15ա հասցեում գտնվող շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Արժեքը հազար դրամ	
				միավորի գինը	ընդամենը
1	2	3	4	5	6
	Համաշինարարական աշխատանքներ 1-3 հարկերը				
	Քանդման աշխատանքներ				
1	Պատուհանների քանդում՝ պատուհանագոգերի հետ միասին	մ^2	38.93	2.773	107.953
2	Փայտյա դռների քանդում	մ^2	33.66	2.442	82.200
3	Դռների և պատուհանների շեպերի գաջի սվաղի քանդում	մ^2	68.00	0.386	26.248
4	Կախովի առաստաղի քանդում՝ներառյալ հիմնակմաղքը	մ^2	9.20	0.498	4.582
5	Պատուհանների մետաղական ճաղավանդակների ապամոնտաժում	տն	0.06	94.344	5.189
6	Երկրորդ հարկի մուտքի դռան մետաղական ճաղաշարի ապամոնտաժում	մ^2	2.10	16.648	34.961
7	Փայտե հին շրիշակների քանդում	գմ	37.80	0.110	4.158
8	Լինոլեումե հատակների քանդում	մ^2	25.60	0.220	5.632
9	Քայքայված բազալտե սալերի մասնակի քանդում	մ^2	15.00	2.444	36.660
10	Երկաթյա դռան ապամոնտաժում	մ^2	4.00	3.884	15.536
11	Պատերից սոսնձաներկի մաքրում	մ^2	1380.00	0.278	383.640
12	Առաստաղներից սոսնձաներկի մաքրում	մ^2	755.60	0.366	276.550
13	Պատերից և առաստաղից գաջի սվաղի քերթատում	մ^2	255.00	1.221	311.355
14	Պատերի և առաստաղի գաջե սվաղի իրականացում բարձր որակի	մ^2	255.00	3.163	806.565
15	Շեպերի գաջե սվաղ բարձր որակի	մ^2	68.00	6.105	415.140
16	Հարդարման աշխատանքների համար՝ սվաղի անկյունակի տեղադրում	մ	580.00	0.199	115.420
17	Պատերի հարթեցում գիպսոնիտով	մ^2	1380.00	0.611	843.180

18	Առաստաղների հարթեցում գիպսոնիտով	մ^2	755.60	0.722	545.543
19	Պատերի և շեպերի մակերևույթի ծեփամածկում գիպսային հիմքով	մ^2	1380.00	0.277	382.260
20	Առաստաղների մակերևույթի ծեփամածկում գիպսային հիմքով	մ^2	755.60	0.333	251.615
21	Պատերի և շեպերի երկշերտ ներկում կիսափայլ լատեքսային ներկով	մ^2	1380.00	1.665	2297.700
22	Առասատաղի երկշերտ ներկում կիսափայլ լատեքսային ներկով	մ^2	755.60	1.720	1299.632
23	Կախովի առաստաղի պատրաստում շերտավոր պլաստիկից, մետաղական ցինկապատ հիմնակմախքով	մ^2	9.20	9.435	86.802
24	Հարդարման աշխատանքների իրականացման համար տախտակամածի կառուցում	մ^2	250.00	0.499	124.750
25	Պատերի երեսապատում գիպսակարտով	մ^2	115.622	8.325	962.553
26	Կախովի առաստաղի կառուցում գիպսակարտոնով	մ^2	139.85	7.437	1040.008
27	Տրավերտինե պատերի սալիկների հղկում	մ^2	15.00	8.658	129.870
	Հատակներ				
1	Գոյություն ունեցող մանրահատակի մասնակի վերանորոգում՝ հղկմամբ	մ^2	56.26	6.105	343.467
2	Նոր շրիշակների տեղադրում՝ MDF	գմ	37.80	0.499	18.862
3	Լամինատե հատակների ամրացում սոսնձանյութով ներառյալ սպունգը և շրիշակները	մ^2	412.20	8.325	3431.565
4	Գոյություն ունեցող մոզայիկ հատակների տեղ տեղ վերանորոգում և ամբողջ մակերեսի հղկում	մ^2	86.57	9.102	787.960
	Աստիճաններ				
1	Աստիճանների և աստիճանավանդակների երեսապատում պրեսսգրանիտով՝ սալիկի սոսնձի վրա	մ^2	38.00	18.314	695.932
2	Պրեսսգրանիտե շրիշակների տեղադրում սալիկի սոսնձի վրա	գմ	45.00	16.094	724.230
	Մուտք				
1	Փայտյա դռան տեղադրում լավորակ	մ^2	2.20	88.795	195.349
2	Գոյություն ունեցող սյուների երեսապատում ալիկաբոնդով՝ մետաղական խողովակի վրա՝ մետաղական կարկասով	մ^2	1.00	42.178	42.178
3	Գոյություն ունեցող ծածկի և առաստաղի երեսապատում ալիկաբոնդով՝մետաղական կարկասի վրա	մ^2	46.00	42.177	1940.142
4	Կախովի առաստաղի լույսերի հնի փոխարինում՝ նորով	հատ	4.00	4.994	19.976

5	Գոյություն ունեցող բազալտե աստիճանների և հարթակների վերանորոգում՝ներառյալ հղկումը	մ^2	32.00	26.638	852.416
	Բացվածքներ				
1	Մետաղապլաստե, սպիտակ գույնի արտասահմանյան կամ համարժեք պրոֆիլներից 60մմ հաստությամբ 4+4մմ ապակեփաթեթով բացվող պատուհաններ	մ^2	23.35	42.733	997.816
2	Նույնը, չբացվող	մ^2	15.58	37.738	587.958
3	Պատուհանագոգերի տեղադրում ցեմենտ ավազե հարթաշերտի վրա,0.15	գմ	13.80	4.218	58.208
4	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում	մ^2	13.86	38.848	538.433
5	Պատուհանների արցունքաթափի տեղադրում 0.5մմ ցինկապատ թիթեղից	մ^2	2.20	10.544	23.197
6	Փայտե լավորակ դռան տեղադրում/2-րդ հարկ/	մ^2	2.10	49.947	104.889
7	Գոյություն ունեցող փայտե դռների ապամոնտաժում, վերանորոգում և տեղադրում	հատ	6.00	13.319	79.914
8	Պատուհանի տեղադրում, մեկ երեսը հայելուց պարտրաստված լինի, մյուս կողմը ապակի/Ճանաչման սենյակի համար	մ^2	0.99	35.518	35.163
9	Մետաղապլաստե վիտրաժների վերանորոգում/ մասնակի	մ^2	4.50	49.947	224.762
	Հատակներ				
1	Պրեսսգրանիտե հատակների կառուցում/սալիկի սոսնձի հիմքով/	մ^2	34.50	12.764	440.358
2	Պրեսսգրանիտե շրիշակների կառուցում	գմ	18.10	15.317	277.238
	Սանհանգույց				
1	Կախովի առաստաղի կառուցում՝հիմնակմաղքով	մ^2	9.20	4.218	38.806
2	Գոյություն ունեցող մետլախե հատակի վերանորոգում՝համապատասխանեցնելով տեղի մետլախի գույնի հետ	մ^2	9.20	7.992	73.526
3	Գոյություն ունեցող պատերի հախճասալիկների վերանորոգում՝ համապատասխանեցնելով տեղի հախճասալիկի գույնի հետ	մ^2	20.00	8.325	166.500
4	Աստիճանների փայտե բազրիքների ապամոնտաժում	մ	20.00	7.303	146.060
5	Ալյումինե բազրիքների տեղադրում	մ	20.00	29.966	599.320
6	Աստիճանավանդակներում ապակե բլոկի ծածկում՝ գիպսակարտոնով	մ^2	10.50	7.215	75.758
	Էլեկտրամոնտաժային աշխատանքներ				
1	Լուսատուների ապամոնտաժում	հատ	58.00	0.555	32.190
2	Անջատիչների ու վարդակների ապամոնտաժում	հատ	45.00	0.104	4.680
3	Լուսատու առաստաղային լյումինեսցենտային լամպերով 4x18վտ հզորությամբ	հատ	30.00	13.874	416.220
4	Լուսատու կախովի առաստաղի շիկացման լամպով 1x60վտ հզորությամբ	հատ	6.00	3.884	23.304

5	Անջատիչ նորմալ տարբերակի, միաբևեռ, թաքնված տեղադրման համար, 220վ, 6Ա	հատ	30.00	1.740	52.206
6	Անջատիչ նորմալ տարբերակի, երկբևեռ, թաքնված տեղադրման համար, 220վ, 10Ա	հատ	20.00	1.590	31.800
7	Խրոցակի վարդակ երկբևեռ, 220վ, 6Ա	հատ	35.00	1.660	58.100
8	Տուփ վարդակների ու անջատիչների համար	հատ	85.00	0.190	16.153
	Ընդամենը				**24750.336**
	Շահույթ 11%				**2722.537**
	Ընդամենը				**27472.873**
	ԱԱՀ 20%				**5494.575**
	Ընդամենը				**32967.448**

Հղում* Միավոր գնի մեջ հաշվարկված են.
Տրանսպորտային ծախսերը,մ/մեխանիզմի ծախսերը, աշխատավարձը,վերադիր ծախսերը, չնախատեսված ծախսերը, կլիմայական պայմանների ազդեցությունը, փոքր ծավալի ՇՄԱ, ժամանակավոր կառույցների, սարքերի և սարքավորումների ծախսերը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՋԱՏԵԳ>>ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 1շ.բն.31
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570024488900100
ՀՎՀՀ 00454467
jateg-llc@rambler.ru

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<< 18 >> մայիսի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀՔԿԴ-ԲԸՀԱՇՁԲ -17/2.1>> գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարքսի 15ա հասցեում գտնվող շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	01.08.2017թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից**	**01.08.2017թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՋԱՏԵԳ>>ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 1շ.բն.31
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570024488900100
ՀՎՀՀ 00454467
jateg-llc@rambler.ru

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
<< 18 >> մայիսի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀՔԿԴ-ԲԸՀԱՇՁԲ -17/2.1>> գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ, Արարատի մարզ, ք. Արտաշատ, Մարքսի 15ա հասցեում գտնվող շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ		7500000	7500000	15000000	15000000	15000000	18707070	18707070	18707070	**18707070**

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՋԱՏԵԳ>>ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Նար-Դոս 12.բն.31
<<Ամերիաբանկ>>ՓԲԸ, Մոսկովյան մ/ճ
Հ/Հ 1570024488900100
ՀՎՀՀ 00454467
jateg-llc@rambler.ru

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 4
<< 18 >> մայիսի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀՔԿԴ-ԲԸՀԱՇՁԲ -17/2.1>> գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
<< 18 >> մայիսի 2017 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ <<ՀՀՔԿԴ-ԲԸՀԱՇՁԲ -17/2.1>> գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N --------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն